



ԱՆԹԱՌԱՄ /Helichrysum/



Անթառամ (լատ.՝ *Helichrysum*), անմեռ ծաղիկ, տիրամոր ծաղիկ ոսկարեգ, և այլն, աստղաձաղկազգիների (բարդաձաղկավորների) ընտանիքի բազմամյա խոտաբույսերի կամ կիսաթփերի ցեղ: Հայտնի է ՀՀ-ում՝ 6 տեսակ: Յոդունի բարձրությունը 15-30սմ է (երբեմն՝ մինչև 1մ): Տերևները հերթադիր են, պարզ, երկարավուն, ամբողջաեզր: Ծաղկաբույլը սկավառակաձև, կիսագնդաձև, գլանաձևից մինչև բրգաձև, թաղանթանման, կաշեկերպ թերթիկներով պատված վահանաձև կամ բազմազուլիս զամբյուղ է: Թերթիկները բարակ են, բազմաշաքք, կղմինդրային, սպիտակ, հարդագույն, դեղին, ոսկեգույն, ծիրանագույն: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին: Պտուղը գլանաձև կամ չընդգծված պրիզմայաձև սերմիկ է: Դեղաբույս է, ծաղկաբույլը պարունակում է ֆլավոնոիդներ, եթերայուղեր, կարոտին, ճարպանյութեր, ներկանյութ: Ծաղկաբույլը հավաքում են ոչ լրիվ բացված վիճակում, չորացնում ստվերոտ, բաց տեղում: Պատրաստուկներն օգտագործում են որպես լեղամուղ, հակաբորբոքային, ցավազրկող միջոց: Ցեղերի դեմ պայքարի միջոցներից է: Գեղազարդիչ է: Պալասի անթառամը հանդիպում է Գեղարքունիքի և Սյունիքի (Գեղամա և Զանգեզուրի շրջաններ) մարզերի վերին լեռնային, գոտու չոր, քարքարոտ լանջերին, գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

ՀՀ-ում հայտնի է 6 տեսակ

Անթառամ ոսկեգույն (*H. callichrysum*),



Անթառամ Պալասի (*H. pallasii*),



Անթառամ բուրավետ (*H. graveolens*),



Անթառամ հայկական (*H. armenium*)



և այլն...

Տարածված է բոլոր մարզերում: Աճում է ժայռոտ, քարքարոտ, խճաքարային վայրերում, ցամաքած գետաբերաններում, անտառեզրերին, ալպյան մարգագետիններում, օշինդրային կիսաանապատային, ֆրիգանոիդային, լեռնատափաստանային խմբավորումներում և այլն: Ծաղիկների անթառամությունը բարձր է գնահատվում, քանի որ կարծր, գեղեցիկ ծաղկապսակը պահպանվում է




երկար տարիներ: Մերմերը ցանում են կիսատաք ջերմոցներում՝ մարտին կամ ապրիլի սկզբին: Դրանք ծլում են 1-2 շաբաթում: Մերմնաբույսերը վերատնկում են արկղերում կամ ջերմոցներում, որից հետո հունիսին տեղափոխում են դաշտ: Անթառամը լուսասեր է, բավականին ջերմասեր և չորադիմացկուն: Պահանջկոտ է հողի նկատմամբ: Մեր հանրապետությունում տարածված ալիքանման (ունդուլաթում) անթառամի ծաղիկները

կարմրավարդագույն են, երբեմն՝ բաց վարդագույն: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին: Աճում է կիսաանապատային գոտու քարքարոտ լանջերին (Երևան, Գառնի, Գողթ, Ուրցի լեռներ): Հայկական անթառամի ծաղիկները բաց դեղնավուն են կամ սպիտակավուն՝ կանաչ շերտիկներով: Աճում է նույն վայրերում: Երկուսն էլ ունեն մանրէասպան և բուժիչ նշանակություն:

Քիմիական բաղադրությունը

Ծաղկազամբյուղները պարունակում են ֆլավոնոիդներ (օրգանական հետերոցիկլիկ միացություններ), եթերայուղ, սկոպուլետին, խեժ, օրգանական թթուներ, սալիքտ, ճարպանյութ, կալցիում, երկաթ, մագնեզիում և այլն:



Բուժական նշանակությունը



Բուժման նպատակով օգտագործվում են բույսի միայն ծաղկազամբյուղները՝ 1-2սմ ցողունային մասով, որոնք կտրում են դանակով կամ մկրատով: Խստիվ արգելվում է բույսը ցողունով կտրել կամ արմատով հանել, քանի որ դրանք կհանգեցնեն անթառամի, առանց այդ էլ ոչ այնքան հարուստ բուսուտների ոչնչացմանը: Հավաքված հումքը չորացնում են ցանցի մեջ, միջանցիկ քամու տակ, ստվերում, այնուհետև պահում թղթով ներպատված փայտյա արկղում՝ 3 տարի

Ժամեկով: Անթառամը օգտագործվում է լեղուղիների, աղեստամոքսային տրակտի և միզուղիների հիվանդությունների ժամանակ:

Կիրառման եղանակները

Թուրմ պատրաստելու համար 3-5գ մանրացրած հումքը 8ժ թրմում են 500մլ սառը ջրում, ապա 1 օրում խմում 3-4 անգամ, կամ վերցնում են 3թ/գ մանրացրած ծաղիկ, ավելացնում 2 բաժակ սառը ջուր, թրմում 8ժ և խմում ամբողջ օրվա ընթացքում: Կարելի է վերցնել նաև 10գ ծաղկափոշի՝ 200գ սառը ջրին, թրմել նույն ձևով և ընդունել 1ճ/գ՝ օրական 3-4 անգամ:



Եփուկ պատրաստելու համար վերցնում են 16գ ծաղիկ՝ 300մլ ջրում եռացնում կես ժամ, հովացնում և խմում կես կամ քարոդ բաժակ՝ օրական 3 անգամ, կամ 1ճ/գ ծաղիկի վրա լցնում են 2 բաժակ ջուր, եռացնում կես ժամ, ընդունում 1ճ/գ՝ օրական 3 անգամ՝ ուտելուց 10-15ր առաջ, կամ 10գ ծաղիկի վրա լցնում են 200գ ջուր, կես ժամ



պահում ջրային բաղնիքում, որից հետո ավելացնում ևս 200մլ ջուր և ընդունում 1ճ/գ՝ օրական 3-4 անգամ՝ ուտելուց առաջ: Ջրիկ մզվածքն ընդունում են 30-40-ական կաթիլ՝ օրական 3 անգամ, իսկ չոր մզվածքը, ինչպես նաև մանրացրած ծաղիկների փոշին՝ 1գ կամ մի պտղունց՝ օրական 3 անգամ: Որպես լեղամուղ միջոց հավասարաչափ վերցնում են եղերդակի և խատուտիկի արմատներ, անթառամ:

Այս խառնուրդից 1ճ/գ 5ր եփում են 1բ/ջրում, հովացնում ու օրական ըմպում 3 անգամ:

Ժողովրդական բժշկություն

Պատրաստուկներն օգտագործում են՝ որպես լեղամուղ, միզամուղ, արյունահոսությունը դադարեցնող, հակաբորբոքային, գաստրիտի, ենթաստամոքսային գեղձի գործունեության խանգարման ժամանակ: Թեյի ձևով օգտագործելիս, դեղնուկը վերանում է մի քանի օրում, ընկնում են ասկարիդները, որոնք ներկված են լինում ծաղիկի դեղին գույնով: Լավ արդյունք է տալիս լյարդի քաղցկեղի և խիթերի ժամանակ, բարձրացնում է ստամոքսահյութի թթվությունը, արյան մեջ նվազեցնում բիլիռուբինի և խոլեստերինի քանակները, չափերով

փոքրացնում է մինչ այդ մեծացած լյարդը: Թերապևտիկ լավ արդյունք է տալիս ծաղկաբույլի թուրմը ստամոքսի գործունեության խանգարումների, երիկամաքարային հիվանդության, երիկամների և միզուղիների բորբոքման ժամանակ, թեթևացնում է ցավերը սուր ցիստիտի, ցավոտ դժվարամիզության, նստաներվի բորբոքման ժամանակ:

Կիրառվում է նաև գյուղատնտեսության մեջ լուլիկի քաղցկեղի և բակլազգիների բակտերիոզի դեպքում: Բույսը թունավոր չէ և չի առաջացնում վատ հետևանքներ: Կենցաղում ծաղկաբույլի նոսր թուրմն օգտագործում են գործվածքները դեղին գույնով ներկելու համար: Ցեցերի դեմ պայքարի միջոցներից է: Սննդի մեջ օգտագործում են որպես համեմունք:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):